

ԳԻՐՔԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԵՆ

Հոս հրամցուած երեք աշխատասիրութիւններէն առաջինը Բաֆֆի Աճէմեանի ուսումնասիրութիւնն է Գրիգոր Պրլաեանի 1988ին Անթիլիասի տպարանէն լոյս ընծայուած Կրակէ շրջանակը Դանիէլ Վարուժանի շուրջ գիրքին մասին: Գոլումպիա համալսարանը 2004ի դարնան իմ հայ զրականութեան սեմինարիս ներկայացուած դասախոսութեան մը բնագիրն է, ընդլայնուած ըստ պատշաճի: Դէտք է կարդացուի հետեւաբար՝ ո՛չ թէ որպէս ուշացած զրախօսական մը, այլ՝ որպէս ընթերցողի մը հանգրուանային գեկոյցը: Հայ մտաւորական աշխարհի տիսուր երեսը այն է, որ գիրքերը չեն կարդացուիր ու եթէ կարդացուին՝ չեն արձագանգուիր: Վարուժանի գործին նուիրուած Պրլաեանի հատորը քսաներորդ դարու վերջին քառորդին ամենէն կարեւոր գիրքերէն մէկն է հայերէն լեզուով: Բանաստեղծական գործի մը ընթերցումը չէ միայն: Փիլիսոփայական խորհրդածութիւն մըն է բանաստեղծութեան, աղէտի, վախճանական փորձառութեան, կրօնքի եւ արուեստի յարաբերութեան եւ այլ՝ յարակից հարցերու շուրջ: Ժամանակը եկած էր զայն խոր կերպով կարդալու, անկէ սորվելու, հոն ներկայացուած զրոյթները եւ փորձուած ընթերցումները վիճարկումի բովէն անցնելու, անոր ետին գտնուող փիլսոփայական կեցուածքները հասկնալու: Բաֆֆի Աճէմեանին աշխատանքը առաջին փորձ մըն է այդ ուղղութեամբ:

Ներկայ բաժնի երկրորդ յօդուածը քննադատական ակնարկ մըն է Երեւանի մէջ նոր լոյս տեսած ողջունելի թարգմանութեան մը մասին, որ Հայերէն լեզուին մէջ կը փոխագրէ Փրանսացի վիլիսովիա՝ Միշէլ Ֆուքոյի Հսկել եւ պատմել Հատորը (ԱեւՄ, 2003): Երրորդը Վարդան Մատթէոսեանի գրախօսական-ուսումնասիրութիւնն է Կոստան Զարեանի Ամերիկա Հատորին (“Երկիրներ եւ աստուածներ” շարքին Երկրորդ միաւորը, “Սպանիա”էն ետք), նոր լոյս տեսած Երեւան, Սարդիս Խաչենց Հրատարակչառունէն, Եռլի Խաչատրեանի խմբագրութեամբ ու ծանօթագրութիւններորով: